Զգուշության փող

Trumpet's Sound

54-ՐԴ ՏԱՐԻ, ԱՎՍՏՐԱԼԻԱ
ՄԱՅԻՍ - ՀՈՒՆԻՍ 2023

Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցի
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH

BI MONTHLY CHRISTIAN PUBLICATION
PUBLISHED BY THE
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
112 SAILORS BAY ROAD, NORTHBRIDGE,
NSW 2063 Australia

PASTOR HRATSH KIUJIAN
ARMENIAN EVANGELICAL BRETHREN CHURCH
PO BOX 1593, CHATSWOOD NSW 2057
email: pastor@armenianbrethren.org
URL: www.acmaust.org

«ԱԶԴԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՈՂ» երկամսյա թերթը Սիդնեյի Հայ Ավետարանական Եղբայրների Եկեղեցու հրատարակությունն է: Պատասխանատու խմբագիր՝ հովիվ Հրաչ Գույումճյան:

Այս թերթը անվճար բաժանվում է հայրենիքում: Յանկացողները կարող են դիմել նշված հասցեով:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Դժվար ժամանակներում ..... Հովիվ՝ Հրաչ Գույումճյան

Աստծո դատաստանի ժամանակը ..... Դոն Սթորմր

Ընդամենը մեկ բառ ..... Նեյլ Բուքման

Հովհաննեսը՝ սիրո առաքյալը ..... Դոկտ.՝ Փոլ Ուայթինգ

Քրիստոսի վերադարձը, թագավորությունը
և երկրային վերջին դատաստանները (4) ..... QMBC պանորամա

Մեր հոգին անմահ է ..... Վեր. Հովսեփ Հովսեփյան

Սուրբ Հոգու գերիշխանությունը ..... Քաղված

Մարգարեություններ Հիսուսի մասին. ..... Ջորջ Հաուք

Բարեպտուղ լինելու գաղտնիքը ..... Քաղված

Մոր մեծ հավատքը ..... Քաղված

Դժվար ժամանակներում

Այանքում բոլորս բախվում ենք դժվար ժամանակների: Հավատացյալները զերծ չեն խնդիրներից: Մենք բախվում ենք անհաջողությունների, հիվանդության, ընտանեկան խնդիրների, աշխատանքի դժվարությունների, զավակների հետ կապված դժվարությունների, ֆինանսական նեղությունների, երբեմն աներևակայելի իրավիճակների, և այդ ամենը պահում ենք մեր սրտում: Երբեմն բարկությամբ աղաղակում ենք. «Ինչո՞ւ, Տե՛ր, ինչո՞ւ ես»:

«Եվ բոլոր շնորհների Աստվածը, որ Քրիստոս Հիսուսի միջոցով մեզ Իր հավիտենական փառքին կոչեց, որոշ ժամանակ նեղություն կրելուց հետո, թող ձեզ կատարյալ դարձնի, հաստատի, զորացնի և հիմնավորի» (Ա Պետ. 5:10):

Ես սիրում եմ այս համարը, քանի որ այն վստահեցնում է մեզ, որ նեղությունները որոշ ժամանակի համար են: Տերը դրանց համար վերջնաժամկետ է սահմանել: Երբեմն մոռանում ենք, որ այս անիծված աշխարհում ենք բնակվում, և որ Երկինքն է մեր գնալու վայրը: Մարգարեներից, սրբերից և Աստվածաշնչի հավատացյալներից շատերը, ներառյալ մեր Տեր Հիսուս Քրիստոսը, տառապանք կրեցին երկրի վրա:

«Եվ ոչ միայն այսքանը, այլ նաև՝ պարծենում ենք նեղությունների մեջ, գիտենալով, որ նեղությունը համբերություն է առաջ բերում, և համբերությունը՝ փորձառություն, փորձառությունը՝ հույս» (Հռոմ. 5:3-4):

Հույս մեր Տեր Հիսուսի նկատմամբ, հույս Նրա հանդեպ, ով մեզ այնքա՜ն սիրեց, որ Իր Որդուն տվեց՝ մեզ մեղքից և հավիտենական տառապանքից փրկելու համար: Մեր հույսը միայն Քրիստոսի վրա է:

Մեր տառապանքները ոչինչ են Տեր Հիսուսի, Նրա աշակերտների և առյուծների առջև կանգնած հավատացյալների տառապանքների համեմատ:

Ներկա նեղությունն ու ապագա փառքը

«Որովհետև, ես կարծում եմ, թե ներկա ժամանակի չարչարանքներն արժանի չեն գալիք փառքի հետ համեմատվելու, որ մեր մեջ պիտի հայտնվի» (Հռոմ. 8:18):

Հաճախ նեղության ենք հանդիպում, քանի որ Տերը ուզում է կերտել մեր բնավորությունը Քրիստոսի մեջ: Ես անձամբ դժվար ժամանակներով եմ անցել: Քանի դեռ այս աշխարհի վրա ենք, միշտ նեղություններ ենք ունենալու: Մենք ապահովագրված չենք դրանցից:

Բայց շատ կարևոր դասեր կան, որոնք կարող ենք սովորել մեր նեղություններից: Ահա մի քանիսը, որ սովորել եմ.

1. Վաղ առավոտյան Նա ինձ հետ է:
2. Նա է, ում պետք է հետևեմ:
3. Նա միակն է, ով կյանք է տալիս, և միակն է, ով վերցնում է այն:
4. Ես պետք է ամբողջությամբ ապավինեմ Աստծուն:
5. Ես պետք է Նրա առաջնորդությանը սպասեմ:
6. Քանի դեռ Նրա մեջ եմ, ես ապահով եմ:

Թո՛ղ Տերն օրհնի ձեզ, մինչ քրիստոնեական կյանքով եք ապրում այս երկրի վրա:

Հ. Գ.

Աստծո դատաստանի ժամանակը

Փարավոնը՝ պատժված, Իսրայելը՝ ազատ արձակված

Իավարի երեք օրերից հետո փարավոնն Իսրայելի որդիներին առաջարկեց իրենց հետ վերցնել իրենց ընտանիքները՝ Տիրոջը երկրպագելու համար, բայց հոտերն ու արջառները թողնել Եգիպտոսում: Սա միանշանակ անընդունելի էր Մովսեսի համար: Ուստի փարավոնը, վերջնագիր ներկայացնելով, որոշեց, որ այլևս զիջումներ չի անելու, և եթե Մովսեսն իր առջև ներկայանա, սպառվելու է:

Փարավոնի վերջնագիրը

Փարավոնն ակնհայտորեն կարծում էր, թե այս խնդիրները Մովսեսի պատճառով էին և ինքը կարող էր վերջ տալ դրանց, եթե սպառնար նրան մահով: Սակայն Մովսեսը պատրաստակամորեն համաձայնեց, որ փարավոնն այլևս իր երեսը չի տեսնի: Աստված նրան արդեն տվել էր հաջորդ (և վերջին) պատուհասի մանրամասները:

Մովսեսը փարավոնին ասաց, որ Տերը կեսգիշերին Եգիպտոսով անցնելու է, և մահանալու են Եգիպտոսի բոլոր անդրանիկները՝ գահին նստած փարավոնի անդրանիկից մինչև աղորիքի մոտ կանգնած աղախնի անդրանիկը և բոլոր անասունների անդրանիկները: Երբ դա կատարվեր, փարավոնը պիտի հրամայեր Իսրայելի որդիներին հեռանալ իր երկրից:

Դատաստան, որը շուտով կատարվելու էր

Աստված Մովսեսին ասաց, որ անցնելու է Եգիպտոսով, սպանելու է բոլոր անդրանիկներին և դատաստան է բերելու Եգիպտոսի բոլոր աստվածների վրա: Աստված երկու բան էր անելու: Առաջին՝ ապացուցելու էր, որ Ինքը միակ Աստվածն է, և երկրորդ՝ պատժելու էր փարավոնին՝ անհնազանդությամբ Իր դեմ հարատև ապստամբելու համար:

Այս իրադարձության մեջ երևան է գալիս Աստծո՝ դատաստան իրականացնելու սկզբունքը: Երբ Աստված դատաստան իրականացնի, այն արդարացիորեն բոլոր մարդկանց վրա կտարածվի, քանի որ բոլորն էլ մեղք գործեցին և զրկվեցին Աստծո փառքից: Աստված անաչառ է, բայց նաև դատաստանից խուսափելու միջոցներ է տրամադրում: Եկե՛ք տեսնենք, թե ինչպես գործեց այս սկզբունքը տվյալ իրադարձության ժամանակ:

Պաշտպանվելու միջոց

Աստված փախուստի միջոց տրամադրեց, չնայած որ պատժելու էր փարավոնին և նրա ժողովրդին: Մովսեսը երբեք չսահմանափակեց փրկության ծրագիրը միայն Իսրայելի որդիներով: Ամսվա 10-րդ օրը ժողովուրդը պետք է ընտրեր անարատ գառնուկ և չորս օր պահեր այն: Այնուհետև 14-րդ օրը երեկոյան պետք է մորթեին գառնուկին, և

արյունից մի քիչ վերցնելով՝ քսեին իրենց տների դռներին և շեմերին: Արյունը պետք է կիրառվեր՝ օգտագործելով գառնուկի արյան մեջ թաթախված զոպան: Այնուհետև մարդիկ մինչև առավոտ պետք է մնային իրենց տներում:

Եթե իրենց տներում մնային, պաշտպանված կլինեին կործանող հրեշտակից: Աստված «պիտի անցներ» դռան կողքով, որտեղ արյունը քսված էր, և պիտի թույլ չտար, որ կործանիչը այդ տունը մտներ: Տան մեջ բոլորն ապահով էին, քանի որ Աստված երաշխավորել էր պաշտպանել բոլոր նրանց, ովքեր հնազանդվել էին Իրեն:

Ոչ մի եգիպտացի չփախավ

Ամսվա 14-րդ օրվա կեսգիշերին կործանող հրեշտակը հարվածեց Եգիպտոսին: Եգիպտացիների յուրաքանչյուր տան մեջ մահ ու ողբ կար, որովհետև չկար որևէ տուն, որտեղ մահացած անձ չլիներ: Մենք կարող ենք հարց տալ. «Արդյո՞ք եգիպտացիները գիտեին գալիք դատաստանի մասին»: Այո՛, անկասկած: Նրանք քաջատեղյակ էին փարավոնի և Մովսեսի պայքարի մասին: Կարո՞ղ էին նրանք նույնպես Զատիկի գառնուկ պատրաստել: Մեզ ոչինչ հայտնի չէ, բայց թվում է, թե չկար որևէ արգելք, որը փրկությունը կսահմանափակեր միայն իսրայելացիների համար: Մենք միայն գիտենք այն, որ փախուստի միայն մեկ ճանապարհ կար, և դա նշանակում էր հավատալ Աստծուն ու հնազանդվել Նրան:

Բոլոր իսրայելացիներն ազատ արձակվեցին

Փարավոնը կանչեց Մովսեսին ու Ահարոնին: Ինքը և իր բոլոր ծառաները Եգիպտոսում գիշերը արթնացան մեծ աղաղակից: Չկար տուն, որտեղ ինչ-որ մեկը մահացած չլիներ: Փարավոնը Մովսեսին հրամայեց. «Վե՛ր կացեք, դո՛ւրս ելեք իմ ժողովրդի միջից՝ դուք էլ ու Իսրայելի որդիներն էլ, և գնացե՛ք, պաշտեցե՛ք Տիրոջը, ինչպես որ ասել եք: Ձեր հոտերն էլ ու ձեր նախիրներն էլ վերցրե՛ք, ինչպես ասել էիք, և գնացե՛ք և ի՛նձ էլ օրհնեցեք»:

Շարունակական սկզբունքներ

Որոշ ճշմարտություններ արժե առանձնացնել: Նախ՝ Աստված թույլ չի տալիս, որ որևէ անձ՝ թե՛ թագավոր, թե՛ հասարակ մարդ, ընդմիշտ մարտահրավեր նետի Իրեն: Վաղ թե ուշ դատաստանը հասնում է: Սակայն երբ դատաստանը մոտենում է, միշտ փախուստի միջոց է լինում, և այդ միջոցի հիմքը հավատքն է:

Աստված ավելի մեծ է, քան այն աստվածները, որոնք մարդիկ ստեղծում են իրենց համար: Եգիպտոսի աստվածները բացարձակապես ուժ չունեին և բոլորովին անպիտան էին: Այնուամենայնիվ, մեր հասարակության մեջ մարդիկ աստվածներ են պատրաստում, որոնց պաշտում են ու վստահում: Ի վերջո այս աստվածները չեն կարող փրկել իրենց Աստծո դատաստանից:

Մարդիկ չեն կարող Աստծո դեմ ապստամբել և անպատիժ մնալ: Եթե մարդիկ վճռել են Աստծո դեմ ապստամբել, վաղ թե ուշ նրանք կքաղեն իրենց մեղքերի հետևանքը: Հռոմ. 1-ին գլխի սկզբունքներն անփոփոխ են: Աստված թույլ է տալիս, որ մարդիկ իրենց ուզած ճանապարհով ընթանան, բայց դատաստանը չի ուշանա:

Մի օր Աստված կանչելու է տղամարդկանց և կանանց, որ Իրեն հաշիվ տան: Մարդկանց սահմանված է մեկ անգամ մեռնել ու դրանից հետո՝ դատաստան:

Այսօր՝ մեզ համար

Ճշմարիտ է, որ փրկության միայն մեկ ճանապարհ կա: Սա մեր լավագույն ջանքերի շնորհիվ չէ, այլ Տեր Հիսուս Քրիստոսի հանդեպ հավատքի շնորհիվ: Միայն Նրա մեջ կարելի է փրկություն գտնել: Դուք հավատքով դիմե՞լ եք Նրան:

Դոն Սթորմը

❊ ❊ ❊

Ընդամենը մեկ բառ

Ծարավ

«Եթե մեկը ծարավ է, թող Ինձ մոտ գա և խմի» (Հովհ. 7:37):

Այս խոսքերը հնչել են Տաղավարահարաց տոնի ժամանակ, երբ Իսրայելը հիշում և տոնում էր Տիրոջ փրկարար զորությունն ու սերը: Մենք լսում ենք, թե ինչպես է Տեր Հիսուսը երկրպագող ամբոխում գտնվող ծարավներին հրավիրում Իր մոտ գալ, որպեսզի այդ ծարավը լիովին հագեցվի:

Նրանց կողքին կանգնած էր Նա, ով միակն էր, որ կարող էր կատարելապես և առատորեն բավարարել նրանց սրտի ամենախոր կարիքը:

Բայց ժողովուրդը ծարավ չէր: Նրանք չէին սգում իրենց մեղքերի համար: Նրանք կուշտ էին, հարուստ և գոհ: Նրանք չցանկացան ազատվել մեղքի բեռից և հաշտվել Աստծո հետ:

Եվ այսպես, քանի որ ծարավ չէին, նրանք չեկան Իր մոտ և չխմեցին Հիսուսի առաջարկած ջուրը:

Արդյո՞ք ուզում ես խաղաղություն ունենալ Աստծո հետ: Արդյո՞ք ծարավ ես:

Նեյլ Բուքման

❋ ❋ ❋

«Նա, ով ասում է, թե լույսի մեջ է և ատում է իր եղբորը, նա դեռևս խավարի մեջ է: Նա, ով սիրում է իր եղբորը, լույսի մեջ է բնակվում, և նրա մեջ գայթակղության պատճառ չկա: Իսկ նա, ով ատում է իր եղբորը, խավարի մեջ է և խավարի մեջ է քայլում ու չգիտի, թե ուր է գնում, որովհետև այդ խավարը կուրացրել է նրա աչքերը»:

Ա Հովհ. 2:9-11

Հովհաննեսը՝ սիրո առաքյալը

Ուկսենք Հովհաննես առաքյալի մասին մեր սերտողության շարքը: Հովհաննեսը կոչված է սիրո առաքյալ: Նա Հովհաննեսի ավետարանի, երեք նամակների և Հայտնություն գրքի հեղինակն է:

Ես իսկապես սիրում եմ կարդալ Հովհաննեսի գրածները մեկ պարզ պատճառով. որպես երիտասարդ՝ նա միացավ Հիսուսի աշակերտների խմբին, հավանաբար երբ դեռ պատանի էր, և ըստ վստահելի աղբյուրների՝ ապրեց մինչև 100 տարեկան հասակը: Ասում են, թե կյանքի վերջին տարիներին նրան գրկած էին տանում քրիստոնեական ժողովներին մասնակցելու, և երբ նա ողջունում էր մարդկանց, միշտ ասում էր. «Որդյակնե՛ր, սիրե՛ք միմյանց»:

Բայց սա չէ պատճառը, թե ինչու եմ այդքան կարևորում Հովհաննեսի գրածները: Դրանք իսկապես կարևոր են, քանի որ ահա մի մարդ, ով ականատես է այդ ամենին: Որպես երիտասարդ՝ նա մասնակցեց Տեր Հիսուսի երկրային կյանքին: Նա Հիսուսի առաջին հետևորդներից էր:

Հովհաննեսի ծնողները ձկնորսական եկամտաբեր բիզնեսով էին ապահովված: Ձկնորսությունը կենսական արդյունաբերություն էր այդ ժամանակի ու վայրի համար: Հավանական է, որ Հովհաննեսը Հիսուսի մասին լսել էր Հովհաննես Մկրտչից և Անդրեասի հետ գնացել էր Հիսուսի հետ խոսելու և Նրա հետ մեկ օր անցկացնելու համար: Հիսուսը մոտեցավ նրան ու կանչեց՝ Իրեն հետևելու որպես աշակերտ: Թվում է, թե Հովհաննեսը չի երկմտում, այլ անմիջապես իր ավագ եղբոր՝ Հակոբոսի հետ հետևում է Հիսուսին:

Հովհաննեսը երեք տարի ապրեց Հիսուսի և մյուս աշակերտների հետ: Նա տեսավ Նրա կատարած հրաշքները՝ հիվանդի, կաղի, կույրի բժշկությունները, մեռածի հարությունը, փոթորկի հանդարտեցումը... Նա լսեց Հիսուսի ուշագրավ ուսուցումները և այնուհետև՝ Նրա կերպարանափոխությունը, դավաճանությունը, ձերբակալությունը, դատավարությունը և խաչելությունը: Նա տեսավ Նրա հարությունը, համբարձումը և Հոգեգալուստը՝ այդ անմոռանալի, կյանքը փոխա-

կերպող իրադարձությունը: Նա ականատես եղավ մեկ օրվա մեջ հազարավորների դարձին: Նա տեսավ եկեղեցու աճը՝ իր արտաքին ու ներքին բոլոր դժվարություններով, և Հիսուսի աշակերտներից շատերի նահատակությունը: Նրա եղբայրը նահատակվեց, իսկ ինքն աքսորվեց Պատմոս կղզի:

Այս երկար ու սքանչելի կյանքի մայրամուտին Նա սկսեց գրել: Նրա գրությունները տարբերվում են Մատթեոսի, Մարկոսի և բժիշկ Ղուկասի գրածներից: Կարծում եմ՝ այն տարբեր էր, որովհետև Հովհաննեսը ժամանակ ուներ խորհրդածելու այն մասին, թե ինչ էր նշանակում այդ ամենը: Արդյոք նա Աստծո Որդո՞ւն հետևեց, թե՞ պարզապես մի մարգարեի: Արդյո՞ք ամեն ինչ արժեր՝ զրկանքը, տառապանքը, ցավը, վիշտը...: Այսպիսի կյանքի վերջում նրա հստակ վկայությունն այն էր, որ, այո՛, այդ ամենը ճշմարիտ էր, ամեն ինչ արժեր, ուստի ուզում էր, որ աշխարհն իմանար ճշմարտությունը ու ճանաչեր իր Ուսուցչին, որին հավատարմորեն հետևել է:

Այդ ամենը հստակ երևում է, երբ կարդում ենք նրա գրությունները: Նա գրեց. «Բայց սրանք գրվեցին, որ դուք հավատաք, թե Հիսուսը Քրիստոսն է, Աստծո Որդին, և հավատալով՝ կյանք ունենաք Նրա անունով»:

Ահա Հովհաննեսի գրելու նպատակը: Նա գրեց, որպեսզի ճշմարտությանը հավատանք և Հիսուսի անունով հավիտենական կյանք ունենանք: Հիմա եկե՛ք անդրադառնանք նրա երեք նամակներին: 1-ին նամակում կարդում ենք այս բացատրությունը. «Եվ այս ամենը գրում ենք ձեզ, որպեսզի ձեր ուրախությունը կատարյալ լինի» (Ա Հովհ. 1:4): Հովհաննեսն այս նամակը գրեց, որպեսզի այն ընթերցող քրիստոնյան ուրախությամբ լցվի: Սա լիովին համահունչ է Հիսուսի փափագին: Նա աղոթեց երկնավոր Հորը Իր ծառայության վերջում. «Որ նրանք Իմ ուրախությունը իրենց մեջ կատարյալ ունենան»:

Այնուհետև նամակի 2-րդ գլխում Հովհաննեսն ասաց. «Իմ որդյակնե՛ր, այս բաները ձեզ գրում եմ, որպեսզի մեղք չգործեք» (Ա Հովհ. 2:1): Նա փափագում էր, որ Հիսուսին մոտ մնանք, հեռու լինենք չարից կամ մեր մեջ բնակվող հին մարդուց, որպեսզի մեղք չգործենք:

Նամակի վերջում նա ասաց. «Այս ամենը գրեցի ձեզ՝ Աստծո Որ-

դու անվանը հավատացողներիդ, որպեսզի իմանաք, որ դուք հավիտենական կյանք ունեք, և որպեսզի հավատաք Աստծո Որդու անվանը»: Նա փափագում է, որ հաստատ իմանանք, որ իսկապես հավիտենական կյանք ունենք՝ վստահելով Հիսուսին:

Հովհաննեսը կարծես ասում է. «Ես ուզում եմ, որ դուք լիակատար ուրախություն ունենաք, ես ուզում եմ, որ չմեղանչեք և իմանաք, որ հավիտենական կյանք ունեք»: Սրանք են նրա գրելու պատճառները, և սրանք պետք է ակնկալենք, երբ կարդում ենք Հովհաննեսի գրածները:

Սակայն միշտ չէ, որ Հովհաննեսն այդքան սիրալիր և աստվածավախ էր: Որպես երիտասարդ և հատկապես Տեր Հիսուսի երիտասարդ հետևորդ՝ Նա սովորելու շատ բան ուներ: Հիսուսը նրան և նրա եղբորը՝ Հակոբոսին, անվանեց «որոտման որդիներ»:

Հովհաննեսին նույնպես մտահոգում էր, թե ով է Հիսուսի աշակերտներից ամենամեծը (Ղուկ. 9): Հիսուսը նրանց ցույց տվեց մի փոքրիկ տղայի և ասաց. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, պիտի բոլորից հետինը լինի և բոլորի ծառան»: Այնուհետև Հովհաննեսը տեսավ մեկին, ով Հիսուսի անունով ծառայում էր, բայց Տասներկուսի հետ չէր: Նա Հիսուսին ասաց, որ իրենք փորձել են արգելել նրան, քանի որ նա գողանում էր իրենց «համբավը»: Բայց Հիսուսը հանդիմանեց նրանց հպարտությունը. «Մի՛ արգելեք նրան... ով մեզ հակառակ չէ՝ մեր կողմն է»: Հետո Հիսուսն աշակերտներին Սամարիայի գյուղերից մեկն ուղարկեց: Բայց այնտեղ ոչ ոք չողջունեց նրանց, երբ հասկացան, որ Երուսաղեմ պիտի գնան: Սամարացիները հրեաներին չէին սիրում: Հակոբոսն ու Հովհաննեսը վրդովվեցին, երբ տեսան, որ իրենց Վարդապետին վատ վերաբերմունք ցուցաբերեցին: Նրանք Հիսուսին դիմեցին՝ ասելով. «Տե՛ր, կուզե՞ս ասենք, որ երկնքից կրակ իջնի և նրանց բնաջնջի, ինչպես Եղիան արեց»: Արդյոք հիշո՞ւմ եք Հիսուսի պատասխանը. ««Չգիտեք, թե ինչ հոգուց եք դուք, որովհետև Մարդու Որդին չեկավ մարդկանց կյանքերը կործանելու, այլ՝ փրկելու նրանց»: Եվ նրանք գնացին ուրիշ գյուղ»: Երիտասարդ Հովհաննեսը, թեև նվիրված հետևորդ էր, սակայն գաղափար չուներ այն մասին, թե ինչ է նշանակում Հիսուսի աշակերտը լինել: Նա Վարդապետից սովորելու շատ բան ուներ:

Ի վերջո Հակոբոսն ու Հովհաննեսը իրենց մոր գլխավորությամբ մտածեցին, որ կարող են Հիսուսի թագավորության ամենաբարձր տեղերը զբաղեցնել: Նրանց մայրը Հիսուսին ասաց. «Թու՛յլ տուր, որ երկնքի թագավորության մեջ իմ այս երկու զավակներից մեկը Քո աջ, իսկ մյուսը՝ ձախ կողմում նստեն» (Մատթ. 20:21): Հիսուսի պատասխանը կրկին ցույց տվեց, թե որքան շատ բան պետք է սովորեն: «Դուք չգիտեք, թե ի՛նչ եք խնդրում»: «Ձեզանից ով կկամենա մեծ լինել, թող ձեր սպասավորը լինի»:

Հովհաննեսը սովորելու շատ բան ուներ, թեև Հիսուսի հետևորդն էր: Նա հոգևորապես աճեց: Նրա կյանքի ամենաթույլ կողմերը վերածվեցին ուժեղ կողմերի: Ես և դուք սովորելու շատ բան ունենք՝ լինելով Հիսուսի հետևորդները: Որքա՞ն ենք սովորել:

Այնուհետև օրը եկավ, այն կարևոր օրը, երբ Սուրբ Հոգին եկավ աշակերտների և Հովհաննեսի վրա: Հովհաննեսը, ինչպես մնացածը, դարձավ նոր մարդ. մարդ, ով բառացիորեն վերածվեց մի այնպիսի մարդու, որին եկեղեցական պատմությունը կոչեց սիրո առաքյալ: Սիրո աստվածաբանությունն արտացոլվում է նրա՝ Ավետարանի նամակներում: Հովհաննեսը գրում է, որ Աստված սիրո Աստված է, որ Աստված սիրեց Իր Որդուն, որ Հիսուսը սիրեց Աստծուն՝ Իր Հորը, որ Աստված սիրեց Հիսուսի աշակերտներին, որ Քրիստոսը սիրեց աշակերտներին, սիրեց յուրաքանչյուրին՝ որպես անհատի, որ Աստված սիրում է աշխարհը, որ Քրիստոսն ակնկալում է, որ մարդիկ սիրեն Իրեն, որ Քրիստոսը սովորեցրեց, որ պետք է սիրենք միմյանց, որ սերն Աստծո օրենքի ամբողջության կատարումն է:

Մենք, ինչպես Հովհաննեսը, հեռու ենք Հիսուսի ուզած անձը լինելուց: Մենք Հիսուսին մեր ընտանիքներում, համայնքներում և աշխարհում ներկայացնելու պատասխանատվությունն ունենք: Բայց երբ տեսնում ենք, թե ինչպես Հիսուսը փոխեց Հովհաննեսին, ու նա դարձավ սիրո առաքյալ, մենք նույնպես, Աստծո Հոգով ներշնչված, սովորում ենք ավելի ու ավելի նմանվել Վարդապետին, ով մեզ սիրեց և Իր Անձը մատնեց մեզ համար:

Դոկտ.՝ Փոլ Ուայթինգ

Քրիստոսի վերադարձը, թագավորությունը և երկրային վերջին դատաստանները (4)

7. Քրիստոսի հազարամյա թագավորությունը (20:4-6)

Որոշ հարցերի, որոնցից մեկը հազարամյա տաճարի կառուցումն է, կարգի դնելուց հետո Տեր Հիսուսը կզբաղեցնի Իր արժանի տեղը սեփական գահին (հմմտ. Հայտ. 3:21) և կթագավորի երկրի վրա 1000 տարի: Վեց անգամ նշված է 1000 տարվա այս ժամանակահատվածը (Հայտ. 20:2, 3, 4, 5, 6, 7), և մենք 1000 տարին բառացի չընդունելու այլ պատճառ չենք տեսնում:

Արդեն նշել ենք, որ երբ 7-րդ հրեշտակը հնչեցնի իր փողը, երկնքում կհնչեն հետևյալ խոսքերը. «Այս աշխարհի թագավորությունները դարձան մեր Տիրոջն ու Նրա Օծյալինը, և Նա թագավորելու է հավիտյանս հավիտենից» (Հայտ. 11:15): Թեև սա ասվում է Քրիստոսի՝ երկիր վերադառնալուց որոշ ժամանակ առաջ, սակայն Երկինքն արդեն գիտի դա, ինչպես նաև այն, որ Քրիստոսը կհաղթի Իր բոլոր թշնամիներին, կմաքրի երկիրը, կկառուցի տաճարը և կհաստատի Իր հազարամյա թագավորությունը երկրի վրա:

Նշենք նաև, որ բոլոր ազգերը, ովքեր տեսնելու են Մեծ նեղության դատաստանները, դատվելու են Տեր Հիսուսի կողմից (Մատթ. 25:31-46): Սա ներառված չէ Հովհաննեսի տեսիլքում:

Տեր Հիսուսը միայնակ չի թագավորելու: Նրա հետ կթագավորեն Հին և Նոր Կտակարաններում հարություն առած բոլոր հավատացյալները: Մինչ Նա երկրի վրա էր, ասաց Իր աշակերտներին. «Ճըշմարիտ եմ ասում ձեզ, որ դուք՝ Ինձ հետևողներդ, վերականգման ժամանակ, երբ Մարդու Որդին նստի Իր փառաց աթոռին, դուք էլ պիտի նստեք տասներկու աթոռների վրա՝ Իսրայելի տասներկու ցեղերին դատելու համար» (Մատթ. 19:28): Պողոս առաքյալը գրեց. «Չգիտե՞ք, որ սրբերը պիտի դատեն աշխարհը» (Ա Կորնթ. 6:2): Նա նաև գրեց. «Եթե տառապենք, Նրա հետ էլ պիտի թագավորենք» (Բ Տիմ. 2:12):

Հովհաննեսն այստեղ ասում է. «Եվ տեսա աթոռներ, ու նստեցին դրանց վրա. և նրանց դատավորություն տրվեց: Նաև Հիսուսի վկայության ու Աստծո Խոսքի համար գլխատվածների հոգիներ տեսա, նրանք, որ գազանին չէին երկրպագել և ոչ էլ նրա պատկերին, ու նրա դրոշմը իրենց ճակատներին ու ձեռքերի վրա չընդունեցին. և ապրեցին ու Քրիստոսի հետ հազար տարի թագավորեցին» (Հայտ. 20:4): Ուստի մենք հասկանում ենք, որ բոլոր նրանք, ովքեր առաջին հարությանը մասնակցում են, ովքեր փառավորված մարմիններով հարություն են առել, Քրիստոսի հետ թագավորելու են երկրի վրա: Մնացած մահացածները (անհավատները) հարություն չեն առնի, մինչև 1000 տարին չավարտվի (Հայտ. 20:5):

1000 տարվա այս շրջանը լինելու է կատարյալ խաղաղության, արդարության և բարգավաճման շրջան, և Քրիստոսի իշխանության ներքո կլինի կատարյալ արդարություն: Նույնիսկ կենդանիները խաղաղ կլինեն և այլևս չեն հոշոտի միմյանց: Եվ փոքրիկ երեխաները ապահով կբնակվեն կենդանիների կողքին (Եսայի 11:6-9, 65:17-25):

Մենք արդեն նշել ենք, որ Հայտնության գրքում կա ութ երանելի: Այստեղ կարդում ենք. «Երանելի ու սուրբ է նա, ով առաջին հարության մեջ բաժին ունի: Սրանց վրա երկրորդ մահը իշխանություն չունի, այլ նրանք Աստծո և Քրիստոսի քահանաներն են լինելու ու Նրա հետ հազար տարի թագավորելու են» (Հայտ. 20:6): (Մյուս երանելիները գտնվում են Հայտ. 1:3-ում (երկու անգամ), 14:13, 16:15, 19:9, 22:7 և 14-ում): Բոլոր նրանք, ովքեր ապաշխարում են իրենց մեղքերից և վստահում ու հավատում են Տեր Հիսուսին՝ ընդունելով Նրան որպես Տիրոջ և Փրկչի, կլինեն առաջին հարության երանելիների թվում:

8. Գոգի և Մագոգի ճակատամարտը (20:7-9)

Շատերը հարցնում են, թե ինչու Աստված ավելի շուտ չի նետում սատանային Կրակե լիճը: Ինչ-որ իմաստուն նպատակով Աստված թույլ է տվել սատանային շարունակել ապականել արարչությունը՝ խաբելով ու մոլորեցնելով միլիոնավոր մարդկանց, ինչպես նաև Մեծ նեղության մեջ ստիպելով նրանց հավատալ այն ստին, թե Նեռը ճըշմարիտ Մեսիան է: Բայց Աստծո որոշած ժամանակում սատանայի վերջնական վախճանն անպայման գալու է:

«Եվ, հազար տարին լրանալուն պես, Սատանան պիտի արձակվի իր բանտից և պիտի սկսի մոլորեցնել երկրի չորս ծագերում գտնվող ազգերին՝ Գոգը և Մագոգը, որ նրանց հավաքի պատերազմի, և որոնց թիվը ծովի ավազի չափ է» (Հայտ. 20:7-8): Նախկինում սատանան գործեց երկրի առաջնորդների միջոցով Արմագեդոնի ճակատամարտում, սակայն այժմ նա ուղղակիորեն աշխատում է ազգերի վրա: Ակնհայտ է, որ Քրիստոսի իշխանության ներքո, երբ սատանան շղթայված լինի, աշխարհի բնակչությունը չափազանց մեծ կլինի, ինչպես ծովափնյա ավազը: Եվ թվում է՝ 1000 տարվա ընթացքում ծնվածներից շատերը չեն դառնա իսկական հավատացյալներ և սատանայի բանտից ազատվելուց հետո նրանք ցույց կտան իրենց իսկական դեմքը՝ հետևելով նրան:

Պատմության ընթացքում սատանան փորձել է ոչնչացնել Աստծո ժողովրդին, և այս վերջին դեպքը բացառություն չի լինի: Նա կունենա ամենամեծ բանակը, որը երբևէ տեսել է աշխարհը, և նրանք կշրջապատեն Աստծո ժողովրդի ճամբարը, այն քաղաքը, որը նա սիրում է, այսինքն՝ Երուսաղեմը: Բայց դա նրանց չի հաջողվի. գրված է. «Երկնքից՝ Աստծուց կրակ իջավ ու կուլ տվեց նրանց» (Հայտ. 20:9):

9. Սատանայի վերջնական պարտությունը (20:10)

Հայտ. 12:7-9-ից իմացանք, որ սատանան և նրա հրեշտակները ցած նետվեցին երկիր, և այլևս նրանց թույլ չտրվեց մոտենալ երկնքին: Իսկ Հայտ. 20:1-3-ից իմանում ենք, որ Մեծ նեղության վերջում սատանան կնետվի անդունդ և 1000 տարով կզրկվի երկիր մուտք գործելու հնարավորությունից:

Երբ սատանան ազատ արձակվի՝ որպես նույն չար արարածը, որը նախկինում էր, ավելի քան երբևէ վճռականորեն հարձակվելու է Աստծո ժողովրդի վրա: Բայց եկել է Աստծո ժամանակը. «Իսկ Բանսարկուն, որ մոլորեցրել էր նրանց, գցվեց կրակի ու ծծումբի լճի մեջ, որտեղ գազանն էր և սուտ մարգարեն: Այնտեղ չարչարվելու են ցերեկ ու գիշեր, հավիտյանս հավիտենից» (Հայտ. 20:10): Այնտեղ բառացիորեն օր չի լինի, քանի որ դա արտաքին խավարի վայրն է: «Ցերեկ ու գիշեր» արտահայտության օգտագործումը ցույց է տալիս,

որ տանջանքները շարունակվում են և շարունակվում են առանց դադարի:

10. Կրկնություն

Մենք ուսումնասիրեցինք այն ահռելի իրադարձությունները, որոնք տեղի կունենան Մեծ նեղության վերջին հատվածում՝ Բաբելոնի անկումը, երկրի սուգը և Երկնքի ցնծությունը, Երկնքում Գառան հարսանիքը, որին հաջորդում է Նրա հաղթական վերադարձը երկիր՝ որպես ԹԱԳԱՎՈՐՆԵՐԻ ԹԱԳԱՎՈՐ ԵՎ ՏԵՐԵՐԻ ՏԵՐ:

Այնուհետև կլինի կարճ ժամանակաշրջան, երբ ամբողջ չարիքը կկործանվի, երկիրը կմաքրագործվի, գազանը և սուտ մարգարեն ողջ-ողջ կնետվեն վառվող ծծմբի Կրակե լիճը և կիրականացվի վերակառուցում, ներառյալ տաճարի կառուցումը, որպեսզի Տերը նստի Իր գահին ու երկրի վրա՝ 1000 տարի թագավորելու համար: Այս ընթացքում սատանան կգտնվի անդունդում՝ շղթաներով կապված ու կնքված:

Քրիստոսի 1000 տարվա թագավորության ընթացքում Երկիրը կվայելի անզուգական խաղաղություն, արդարություն և բարգավաճում: Բայց հենց որ սատանան ազատ արձակվի, նա նորից կմոլորեցնի ազգերին և կփորձի ոչնչացնել Աստծո ժողովրդին: Երուսաղեմը շրջապատող ազգերը կոչնչացվեն երկնքից եկող կրակով, և սատանան կնետվի վառվող Կրակե լիճը:

Երբ Տեր Հիսուսն ասաց, որ հավիտենական կրակը՝ այսինքն՝ վառվող ծծմբի լիճը, պատրաստված է սատանայի և նրա հրեշտակների համար (Մատթ. 25:41), այն պատրաստված չէր մարդկության համար: Աստված դեռ «կամենում է, որ բոլոր մարդիկ փրկվեն և ճշմարտության ճանաչմանը հասնեն» (Ա Տիմ. 2:4): Բայց նրանք, ովքեր հրաժարվում են Հիսուսին՝ որպես Տիրոջ ու Փրկչի ընդունելուց, կունենան նույն ճակատագիրը, ինչ սատանան, գազանը և կեղծ մարգարեն: Աստված ուզում է, որ բոլոր մարդիկ հաշտվեն Իր հետ, որպեսզի Նա կարողանա Իր օրհնությունները շնորհել նրանց այստեղ, ինչպես նաև հավիտենականության մեջ:

Մեր հոգին անմահ է

Փիլիպ. 1

2000թ. հուլիսին՝ երկու շաբաթվա ընթացքում, մեր ազգականներից չորսը մահացան: Թեև բաժանման ցավը մեծ էր, բայց մեր սրտում ուրախություն և Աստծո խաղաղություն կար, որովհետև գիտեինք, որ նրանք ավելի լավ տեղում են՝ իրենց Արարչի ու սիրելիի մոտ:

Հիսուսին հավատացողները զերծ չեն ցավից ու տառապանքից: Նրանք զգում են տխրություն ու արցունք են թափում իրենց սիրելիի մահվան համար: Նույնիսկ Հիսուսը լացեց, երբ Իր սիրելիներից մեկը մահացավ (Հովհ. 11:32-36): Բայց ինչո՞ւ հավատացյալները չպետք է այս աշխարհի անհավատների նման սգան. որովհետև մահվան ժամանակ մարդու հոգին անմիջապես Տիրոջ ներկայության մեջ է մըտնում:

Ֆիզիկական մահով մարդը երկրային կյանքից անցնում է Քրիստոսի մոտ: Մահը ոչ թե ընդհատում է Աստծո հետ մարդու հարաբերության շարունակականությունը, այլ միայն ամբողջացնում է այն: Պողոս առաքյալն ասում է, որ Քրիստոսի հետ լինելը շատ ավելի լավ է.

«Մեկնելու և Քրիստոսի հետ լինելու փափագ ունենալով» (Փիլիպ. 1:23):

«Բայց վստահ ենք և ավելի ընտրում ենք այս մարմնից դուրս գալ և Տիրոջ մոտ մտնել» (Բ Կորնթ. 5:8):

Այո՛, բոլորս պետք է անցնենք մահվան հովտով, անցնենք, այլ ոչ թե այնտեղ մնանք: Մեր մարմինները մահկանացու են, բայց Հիսուսն ասաց.

«Եթե մեկն իմ խոսքը պահի, նա մահ չի տեսնի հավիտյան» (Հովհ. 8:51):

Աստվածաշունչը հստակ ասում է, որ մահը վերջը չէ: Մեր հոգին անմահ է: Աստված մարդուն հողից է ստեղծել և կենդանության շունչ պարգևել:

«Եվ Աստված հողի փոշուց շինեց մարդուն և նրա ռունգերի մեջ կենդանության շունչ փչեց, և մարդը կենդանի հոգի եղավ» (Ծնն. 2:7):

Աստծո շունչը մեզ տվեց անմահ հոգի՝ մեզ դարձնելով կենդանի էակներ:

«Եվ հողը հետ չի դարձել երկրին, ինչպես որ էր, և հոգին հետ չի դարձել Աստծո մոտ, որ տվել էր» (Ժող. 12:7):

Քանի որ Հիսուսը հաղթեց մահվանը, որը մեր վերջին թշնամին էր, քրիստոնյա հավատացյալը կարող է հաղթանակով կանգնել մահվան դեմ: Թեև մահն անխուսափելի և հաճախ անսպասելի է, այն չպետք է անակնկալ լինի մեզ համար: Մահը չպետք է ահ ու սարսափ առաջացնի: Այն պետք է մեզ համար դառնա մի ակնթարթ, որից հետո տեսնելու ենք «դեմ առ դեմ», այլ ոչ թե «աղավաղված», ինչպես հայելու մեջ ենք տեսնում (Ա Կորնթ. 13.12):

Հիսուսն ասաց. «Ես եմ հարությունը և կյանքը, ինձ հավատացողը թեև մեռնի էլ, կապրի» (Հովհ. 11:25):

Հետո Հիսուսը հարցրեց Մարթային. «Դու հավատո՞ւմ ես սրան»:

Սիրելի՛ ընթերցող, Հիսուսը քեզ նույն հարցն է տալիս: «Դու հավատո՞ւմ ես, որ մահից հետո ապրելու ես Հիսուս Քրիստոս Փրկչի միջոցով»: Հիսուս Քրիստոսին ընդունե՞լ ես որպես քո Տեր և Փրկիչ: Հուսով եմ՝ ընդունել ես, քանզի միայն Նա կարող է հավիտենական կյանք տալ քեզ:

Վեր. Հովսեփ Հովսեփյան

❊ ❊ ❊

«Դրա համար, մենք նույնպես միշտ աղոթում ենք ձեզ համար, որ մեր Աստվածը այս կոչմանը ձեզ արժանի համարի և զորությամբ կատարի Իր զթասրտության ամբողջ բարեհաճությունը և հավատի գործը»:

Բ Թես. 1:11

Սուրբ Հոգու գերիշխանությունը

Մի միսիոներուհի պատմում է. «Տարիներ առաջ, երբ Հնդկաստանում էինք ապրում, և զավակներս գիշերօթիկ դպրոցում էին, վաղ առավոտյան արթնացա, քանի որ վախենալու երազ էի տեսել:

Երազումս տեսա, թե ինչպես վաղ առավոտյան մեր տան բակում՝ ճանապարհի եզրին, երկար շարքով կանգնած, մարդիկ սպասում էին, որ իրենց կժերի մեջ ջուր լցնեն: Ոմանք աշխատանքի էին գնում, իսկ փոքրիկները՝ դպրոց: Ամեն ինչ հանդարտ էր թվում և բնականոն, երբ հանկարծ բոլորը սկսեցին կռվել և միմյանց կժերը կոտրել: Մի քանիսը, վիրավորում ստացած, արյունահոսում էին: Այս աղմուկի միջից լսեցի, որ ինչ-որ մեկը ինձ է կանչում՝ ասելով. «Ռեբեկան առևանգված է», - իմ աղջկան նկատի ունենալով: Սա լսելով՝ մահճակալից ցատկեցի և շատ տկար զգացի ինձ: Վազեցի կողքի սենյակ, լույսը վառեցի և սեղանի մոտ նստեցի: Վախը պարուրել էր ինձ: Չէի կարողանում մտածել, ոչ էլ աղոթել: Կարծես ոչնչացված լինեի: Նկատեցի, որ գիշերվա ժամը երկուսն է:

Երբ այս վախազդու վիճակում էի, հստակ և ուժգին ձայն լսեցի ներսից, որ ասում էր ինձ. «Դու պաշտում ես և ծառայում ես կենդանի Աստծուն ու Նրան ես աղոթում ամեն օր: Շարունակ աղոթում ես զավակներիդ համար և նրանց ծածկում Հիսուս Քրիստոսի արյան պաշտպանությամբ: Արդյոք հավատո՞ւմ ես սրան: Հիշո՞ւմ ես՝ երբ Ռեբեկայով հղի էիր, հալածվում էիր այն վախով, թե սահելու ես և կորցնելու ես երեխայիդ: Հիշի՛ր, թե ինչպես նրան պահեցի Իմ խոսքով, որը գրված է Սաղմոս 127:3-ում. «Ահա, երեխաները Տիրոջ ժառանգությունն են. որովայնի պտուղը Նրա պարգևն է»:

Այնքան սոսկալի վախով էի պաշարված, որ ոչինչ չէի հիշում: Ուստի թուղթ և մատիտ վերցրի ու սկսեցի գրել այն, ինչ այս Ձայնն ասում էր ինձ: «Երբ փոքրիկներդ մանկամսուրում էին և դուք հալածվում էիք Հիսուս Քրիստոսի մասին վկայելու պատճառով, երբ կար ամուսնուդ դանակահարելու, զավակներիդ առևանգելու, ձեր ընտանիքի վրա թթու (acid) թափելու և ձեր տունը այրելու վտանգը՝ ձեզ

բոլորովին կործանելու համար, հիշի՛ր, թե ինչպես Իմ խոսքով պահեցի ձեզ: «Տերը ոչնչի է հանգեցնում հեթանոսների խորհուրդը, ի չիք դարձնում ժողովուրդների ծրագրերը» (Սաղ. 33:10): Ձայնը շարունակեց. «Եվ հիմա թշնամին չի դիպչի Ռեբեկային: Հիշի՛ր այն երգի բառերը, որ անցյալ շաբաթ աստվածաշնչյան ամառնային դպրոցում երգում էիք ամեն օր. ««Ծառայում եմ Փրկչին, որ հարյավ»: Սա իրակա՞ն է քեզ համար»:

Մինչ գրում էի ամեն բան, հավատքս սկսեց սավառնել, սթափվեցի և ուրախացա, քանի որ Սուրբ Հոգին անձամբ ինձ օգնության հասավ այս կերպով: Երգարանս բացեցի և երգեցի 651-րդ երգը՝ Տիրոջով ցնծալով և Նրան փառաբանելով: Երբ վերջացրի, տեսա, որ ժամը չորսն է: Նախ վախեցա նորից պառկել, որպեսզի երազս չշարունակվեր, սակայն հետո հիշեցի, թե ինչպես Սուրբ Հոգին օգնեց ինձ, ուստի որոշեցի քունս շարունակել:

Հաջորդ օրը գրեցի աղջկաս, որ գիշերօթիկ դպրոցում էր, և հարցրի, թե ի՞նչ էր անում հուլիսյան այդ օրը՝ առանց երազիս մասին որևէ բան ասելու: Ասաց, որ դպրոցի մարզական օրն էր, և հանրության համար մուտքը բաց էր: Իմացա, որ Աստված ևս մեկ անգամ միջամտել էր, Իր գերիշխան զորությամբ և ողորմությամբ կրկին պաշտպանել էր աղջկաս: Փառք Նրա սուրբ անվանը:

Աստված մեր կյանքի ղեկավարն է, քանի որ իրապես ծառայում ենք հարուցյալ Փրկիչ Հիսուս Քրիստոսին: Զորություն կա Հիսուսի արյան մեջ՝ մեզ պաշտպանելու թշնամու բոլոր հնարքներից (Հայտ. 12:11):

Փառաբանե՛նք Հիսուս Քրիստոսին, քանի որ Նա ապրում է և Նա է տերերի Տերը և թագավորների Թագավորը: Սուրբ Հոգին է այն զորությունը, որ Հայր Աստված տալիս է մեզ, որպեսզի կարողանանք քայլել Հիսուս Քրիստոսի խոսքով ու կամքով:

«Որովհետև Տիրոջ աչքը արդարների վրա է և ականջները՝ նրանց աղոթքին. սակայն Տիրոջ երեսը չարագործների դեմ է» (Ա Պետ. 3:12):

Քաղված՝ «Բարեպտուղ ձիթենին» գրքից

Մարգարեություններ Հիսուսի մասին

Նրա ծագումնաբանությունը

Երբ աշխատանքի հայտարարություն է տրվում, սովորաբար նշվում է աշխատանքի նկարագրությունն ու հիմնական պահանջները, օրինակ՝ որակավորում, հմտություններ և աշխատանքային փորձ: Իսկ ո՞րն է Մեսիայի հիմնական որակավորումը: Դրանցից մեկը, անկասկած, ծագումնաբանությունն է:

Մեսիայի ծագումնաբանության մասին մարգարեությունները կարելի է գտնել Հին Կտակարանում: Այն նաև մանրամասնորեն նշված է Նոր Կտակարանի սկզբում (Մատթ. 1:1-16):

Աբրահամի սերնդից

Աստված Աբրահամին ասաց. «Երկրի բոլոր տոհմերը քեզնով պիտի օրհնվեն» (Ծննդ. 12:3): Սա նշանակում է, որ նրա սերունդներից մեկը կօրհնի ողջ երկիրը:

Կատարում. Աբրահամին հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:1, Ղուկ. 3:34): Պողոսը գրել է. «Խոստումներն Աբրահամին և նրա սերնդին տրվեցին: Նա չի ասել՝ «Եվ քո սերունդներին», որպես թե շատերին, այլ միայն մեկին՝ «Եվ քո սերընդին», որը Քրիստոսն է» (Գաղ. 3:16): Աստված եզակի թիվ օգտագործեց, որպեսզի ընդգծի, թե Աբրահամի սերնդի միայն մեկ ժառանգի միջոցով է աշխարհն օրհնվելու: Աբրահամին տրված ուխտի խոստումները կատարվեցին Քրիստոսի Անձով և Նրա կատարած գործով:

Բայց Աբրահամն ուներ ութ որդի (Ծննդ. 25:1-2):

Իսահակի սերնդից

Աստված այդ որդիներից մեկին՝ Իսահակին ասաց. «Երկրի բոլոր ազգերը քո սերնդով կօրհնվեն» (Ծննդ. 26:4): Եվս մեկ անգամ սա նշանակում է, որ նրա սերունդներից մեկը կօրհնի ամբողջ երկիրը:

Կատարում. Իսահակին հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:1, Ղուկ. 3:34):

Բայց Իսահակը երկու որդի ուներ:

Հակոբի սերնդից

Իսահակն իր որդիներից մեկի՝ Հակոբի մասին այսպես ասաց. «Եվ տա քեզ Աբրահամի օրհնությունը, քեզ և քեզ հետ քո սերնդին» (Ծննդ. 28:4): Եվ Աստված կրկնեց Հակոբին տրված Իր խոստումը՝ ասելով. «Քո երանքից թագավորներ դուրս գան» (Ծննդ. 35:11-12):

Կատարում. Իսահակին հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:1, Ղուկ. 3:34):

Բայց Հակոբը տասներկու որդի ուներ:

Հուդայի սերնդից

Հակոբն իր որդիներից մեկի՝ Հուդայի մասին այսպես ասաց. «Իշխանության գավազանը չի հեռանալու Հուդայից, ո՛չ էլ օրենսդիրը՝ նրա ոտքերի մեջտեղից, մինչև որ Սելովը գա. և Նրա շուրջն է ժողովուրդը հավաքվելու» (Ծննդ. 49:10):

Կատարում. Հուդային հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:1, Ղուկ. 3:33):

Բայց Հուդան հինգ որդի ուներ (Ծննդ. 46:12):

Այնուհետև 9 սերնդի ժամանակամիջոց բաց է թողնված (մոտ 650 տարի) մինչև Հեսսե:

Հեսսեի սերնդից

Եսային գրել է. «Եվ Հեսսեի բնից մի գավազան պիտի դուրս գա, մի Ճյուղ պիտի ընձյուղվի նրա արմատներից» (Եսայի 11:1): Եվ հետո նա նկարագրում է Մեսիայի հազարամյա թագավորությունը (Եսայի 11:2-12:6):

Կատարում. Հեսսեին հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:5, Ղուկ. 3:32):

Բայց Հեսսեն ութ որդի ուներ, և Դավիթը կրտսերն էր (Ա Թագ. 16:10-11):

Դավիթ թագավորի սերնդից

Նաթան մարգարեն Դավթին ասաց իր սերնդի մասին. «Տերը քեզ տեղեկացնում է, որ Ինքն է քեզ համար տուն շինելու: Եվ երբ քո օրերը լրանան, ու դու ննջես քո հայրերի հետ, քեզանից հետո քո երանքից ելած զավակիդ եմ բարձրացնելու ու հաստատելու եմ նրա թագավորությունը: Նա է Իմ անվան համար տուն շինելու, ու նրա թագավորության աթոռը կանգուն պիտի պահեմ հավիտյան» (Բ Թագ. 7:11բ-13): Սա հավիտենական թագավորություն ստեղծելու անվերապահ ուխտ է (Բ Թագ. 7:16):

Կատարում. Դավթին հանդիպում ենք Քրիստոսի ծագումնաբանության մեջ (Մատթ. 1:6, Ղուկ. 3:31): Գաբրիել հրեշտակն ասաց Մարիամին. «Ահա կհղիանաս և որդի կծնես ու Նրա անունը Հիսուս կդնես... Տեր Աստված Նրան կտա Իր հոր՝ Դավթի աթոռը, և Նա հավիտյան կթագավորի Հակոբի տան վրա» (Ղուկ. 1:31-32): Դավթի թագավորությունն ընդհատվեց Բաբելոնի գերությունից ի վեր, սակայն այն կվերականգնվի, երբ Քրիստոսը վերադառնա՝ երկրի վրա թագավորելու (Գործք 2:30):

Դավիթն իր կանանցից առնվազն 20 որդի ուներ, իսկ հարճերից կլինեն նաև ուրիշներ: Ընտանեկան գիծն անցնում էր նրա որդու՝ Սողոմոնի միջով (Մատթ. 1:6):

Ուստի միայն Դավիթ թագավորի հետնորդը կարող է համապատասխանել խոստացված Մեսիան լինելու այս պահանջին: Դա գործը կատարելու էական պահանջն է: Եվ մենք գիտենք, որ Հիսուս Քրիստոսը միակ Անձն էր, ով բավարարեց խոստացված Մեսիան լինելու բոլոր պահանջները:

Բարեբախտաբար Հիսուսը Փրկիչ եղավ նաև հեթանոսների համար (Մատթ. 22:1-14): Հրավերը բոլորին է ուղղված, բայց միայն քչերն են ընդունում այն (Մատթ. 22:14): Նրանց համար Պողոսն ասում է. «Որպեսզի Աբրահամի օրհնությունը Քրիստոս Հիսուսով հեթանոսների վրա գա» (Գաղ. 3:14):

Աղոթք

Հա՛յր Աստված, շնորհակալ ենք Քեզ Մեսիային աշխարհ ուղարկելու խոստման համար: Փրկության մեծ ծրագիրն Աբրահամին հայտնեցիր մոտավորապես 4000 տարի առաջ, իսկ Հիսուսն այս մարգարեությունը կատարեց մոտավորապես 2000 տարի առաջ: Նա ուներ մեր Փրկիչը լինելու այս կարևոր որակավորումը: Նա ճիշտ ծագումնաբանությունն ուներ: Այսպիսով, մենք շնորհակալություն ենք հայտնում ու գովաբանում Քեզ այն ամենի համար, ինչ արեցիր Տեր Հիսուսի միջոցով: Քրիստոսի անունով, ամեն:

Ջորջ Հաուք

Բարեպտուղ լինելու գաղտնիքը

Ձմեռ է: Եղանակը սառն է, երկինքը՝ հաճախ ամպամած, ծառերն ու պարտեզները՝ մերկացած: Բազմաթիվ երկրներում ձյան սավանի տակ ննջում է բնությունը: Սակայն չենք մտահոգվում. գիտենք, որ ձմեռից հետո գալու է գարունը՝ իր կանաչազարդ, գունագեղ դաշտերով ու ծաղիկներով, և երբ ցրտի սավանը վերանա, ծառերը, որ մերկ են հիմա, կկենդանանան նոր կանաչ տերևներով, ապա ծաղիկներով ու պտուղներով: Սա է բնության ընթացքը: Առանց ձմռան գարուն չի գա: Ուստի քաջալերվենք այս ճշմարտությամբ և սպասենք հույսով ու հավատքով:

Երբ Աստծո Խոսքն ենք նայում, այնտեղ հանդիպում ենք շատ հակասական սկզբունքների: Տեր Հիսուսն ասել է. «Եթե մեկն ուզում է առաջին լինել, պիտի բոլորից հետինը լինի և բոլորի ծառան» (Մարկ. 9:35): Ղուկ. 15-րդ գլխում կարդում ենք, որ ինչ-որ բան պետք է կորցնենք, որ գտնենք (4:10), պետք է տանք, որ ստանանք (Ղուկ. 6:38), պետք է լացենք, որ ուրախանանք (Սաղ. 30:5) և վերջապես՝ պետք է մեռնենք, որ ապրենք, ինչպես գրված է Հովհ. 12:24-ում. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ. եթե ցորենի հատիկը հողի մեջ չընկնի և չմեռնի, այն միայնակ կմնա, իսկ եթե մեռնի, շատ պտուղ կբերի»: Այս

ճշմարտության լույսի ներքո գիտակցում ենք, որ մարդը պետք է իր անձն ունայնացնի, որ ապրի հավիտենապես: Մի խոսքով՝ պետք է դատարկվենք, որ լցվենք:

Շատ տպավորիչ հրաշքի մասին ենք կարդում Դ Թագ. 4-րդ գլխում (2-6): Այնտեղ տեսնում ենք Եղիսե մարգարեին, ով, աստվածավախ մի կնոջ աղերսանքին ընդառաջելով, հիասքանչ կերպով պատկերացնում է այս սկզբունքը, որ Տերը լցնում է դատարկ ամանները: Որբեվայրին գիտեր, թե ում պետք է դիմել անելանելի կացության առջև գտնվելիս: Պարտատերը եկել էր և ուզում էր նրա երկու որդիներին որպես ծառաներ վերցնել՝ այդպես մարելով պարտքը վճարելու կարողություն չունեցող կնոջ պարտավորությունը: Եղիսեն հարցրեց, թե ինչ ունի տանը: Նա ասաց. «Քո աղախինն իր տանը մի աման յուղից բացի ոչինչ չունի»: Մարգարեն հանձնարարեց, որ դատարկ ամաններ հավաքի դրացիներից, դուռը կողպի և իր ունեցած յուղը լցնի այդ ամանների մեջ: Տղաները ամանները մոտեցնում էին, և կինը ունեցած յուղը լցնում էր դրանց մեջ, մինչև որ բոլոր ամանները լցվեցին: Երբ ուրիշ դատարկ աման չմնաց, յուղը դադարեց: Ուստի կինը գնաց Աստծո մարդու մոտ և պատմեց հրաշքը, նա էլ ասաց. «Գնա՛, յուղը ծախի՛ր ու պարտքդ վճարի՛ր, իսկ ավելացածով դու և քո որդիներն ապրեցե՛ք»:

Սաղմոսերգուն ասել է. «Իսկ ես իմ շփոթմունքի մեջ ասացի, թե. «Ես կտրված եմ Քո աչքի առջևից», սակայն Դու լսեցիր իմ աղերսանքի ձայնը, երբ Քեզ աղաղակեցի» (31:22): Այս որբևայրին նույնը արեց, երբ անլուծելի դժվարության հանդիպեց: Հարևաններին կամ ազգականներին դիմելուց առաջ նա Տիրոջ ծառային բացեց սիրտը: Աղաղակեց, այսինքն՝ ամբողջ սրտով խնդրեց, և երբ մարգարեն անտրամաբանական լուծում հայտնեց, այս աստվածավախ կինը, առանց հարցուփորձի, հնազանդվեց և գործի անցավ: Տերն ուզում է, որ մենք նույնպես ամեն տեսակի պարագաներում նախ՝ Իրեն դիմենք և ապա՝ հնազանդությամբ հետևենք Իր Խոսքին: Սատանան կասկած է ցանում մեր մտքում, սակայն Տիրոջն ապավինող զավակը, առանց երկմտելու, անմիջապես կատարում է Աստծո կամքը: Այդ ժամանակ ենք հրաշք վայելում, ինչպես պատահեց որբևայրու պարագայում: Տերը փափագում է, որ մենք դատարկվենք, որպեսզի մեզ լցնի Իր

յուղով: Երբ մեր ունեցած մի ման յուղը սիրահոժար տանք Տիրոջը, Նա անհրաժեշտ չափից ավելին կտա մեզ: Երբ այս որբևայրին հավատքով կատարեց աստվածային պատվերը, կարողացավ պարտքը վճարել, տղաներին ազատել և Տիրոջ տված բարիքով հանգիստ ապրել ընտանիքի հետ:

Առատաձեռն է մեր Տերը: Նա քչով չի գոհանում: Մեր տված մեկի փոխարեն տասն է պարգևում մեզ: «Տվեք ու կտրվի ձեզ. մեծ չափով, թխմված, թափ տրված, հորդելով կլեցնեն ձեր գոգը: Որովհետև ինչ չափով որ չափեք՝ նույն չափով կչափվի ձեզ» (Ղուկ. 6:38):

Սիրելինե՛ր, Աստծո բարիքները վայելելու համար պետք է դատարկվենք, որ Ամենակարողը մեզ լցնի Իր օրհնություններով: Ինչպե՞ս դատարկվել և ինչերի՞ց: Նախևառաջ պետք է գիտակցենք, որ հոգեպես սնանկ ենք: Առանց Հիսուսի մեր կյանքը դատարկ է: Սակայն մարդ արարածն աշխարհային ցանկություններով, փափագներով կամ հոգսերով է լցնում իր էությունը: Երբ սիրտդ երկրային բաներով է լի, Տերը չի կարող Իր բարիքներով ողողել քեզ: Մենք պետք է դատարկվենք՝ ապաշխարելով, դառնանք Հիսուսի աշակերտը, որ Նա կյանքով և ավելի կյանքով լցնի մեզ:

Տեր Հիսուսը նույնը արեց (Փիլիպ. 2:7-9): Աստծո ճշմարիտ զավակի պարտականությունն է՝ իր անձը ուրանալ, ամեն օր խաչը վերցնել և Հիսուսին հետևել (Ղուկ. 9:23):

Ուստի եկեք միասնաբար քննենք մեր անձերը և դուրս նետենք այն ամենը, ինչ աշխարհային է, երկրային ու ապականիչ: Դատարկվենք մեր հոգսերից և ամբողջությամբ նվիրվենք Տիրոջը, որպեսզի Նա լցնի մեզ Իր յուղով՝ Սուրբ Հոգով: Այն ժամանակ մենք կլինենք իմաստուն կույսերի պես, որոնք լուսատու լապտերներով կարողացան դիմավորել Փեսային, երբ նա անակնկալ կերպով ժամանեց:

Երբ աստվածաշնչյան այս սկզբունքին հետևենք, այսինքն՝ ընդունենք, որ պետք է դատարկվենք՝ լցվելու համար, այդ ժամանակ կկարողանանք օրհնաբեր կյանք ունենալ և լինել բարեպտուղ հավատացյալներ Աստծո շնորհքով ու Նրա փառքի համար: Ամեն:

Քաղված՝ «Ավետաբեր ձիթենին» գրքից

«Որովհետև Մարդու Որդին եկավ փնտրելու և փրկելու կորածին» (Ղուկ. 19:10)

«Պահանջվում է». թերթերն անընդհատ թողարկում են հրապարակում այս վերնագրով: Կազմակերպությունների տեղադրած հայտարարությունները թերթում ավելի շատ տեղ են զբաղեցնում, քան աշխատանք փնտրողներինը, քանի որ կազմակերպությունների հայտարարություններում անհրաժեշտ է նշել այն պայմանները, որոնց պետք է համապատասխանեն պոտենցիալ թեկնածուները՝ մանրամասն տեղեկություն մասնագիտության, փորձառության, համակարգչի և լեզուների իմացության, անձնական հատկանիշների և տարիքի մասին: Այսպիսի պայմանների երկար ցանկը կարող է հեշտությամբ կոտրել որոշ թեկնածուների ցանկությունը:

Մենք ուզում ենք օգտագործել այս օրինակը բացարձակապես այլ հարցի մասին խոսելու համար: Աստծո Խոսքը հրապարակում է առաջարկություն, նաև թվարկում է անհրաժեշտ պայմանները: Որևէ մեկը կարող է մտածել, թե խոսքը Տասը պատվիրանների մասին է: Սա նույնպես ճիշտ է, սակայն Քրիստոսի գալուստից 1500 տարի առաջ արդեն ակնհայտ էր, որ ոչ ոք չի կարող կատարել այդ պայմանները: Եվ լիովին պարզ էր, որ մարդը կորած է և չի կարող փրկել ինքն իրեն:

Հենց դրա համար Տեր Հիսուսն աշխարհ եկավ: Նա չեկավ մեզ դատելու: Նա բերեց նոր պայմաններ: Նա եկավ՝ փնտրելու և փրկելու կորածին: Գլխավոր պայմանը, որը պետք է կատարել, կորած լինելու փաստն ընդունելն է, որին հաջորդում է ապաշխարությունը և հավատքը: Տեր Հիսուսը Երկնքից եկավ՝ կորած մեղավորներին Իր մահով փրկելու համար: Ընթերցո՛ղ, եթե դու ուզում ես տեղ ստանալ Երկնքում, ապա պետք է համապատասխան տվյալներով հայտ ներկայացնես:

Քաղված

Մոր մեծ հավատքը

Երկար տարիներ Թոմ Քարթրի մայրը աղոթել էր Աստծուն իր որդու համար, որպեսզի նա փրկվի և անմահ հոգիներին դեպի Փրկիչն առաջնորդող քարոզիչ դառնա: Նրա տղան չարագործ էր, անզգամ և բանտարկված էր: Հակառակ այդ բոլորին՝ մայրը, առանց վհատվելու, աղոթում էր՝ հավատալով, որ Աստված անպայման պատասխանելու է իր թախանձագին աղոթքներին: Մի օր իր որդու մահը գուժող հեռագիր ստացավ բանտից:

Խեղճ մայրը մի քանի վայրկյան խռոված մնալուց հետո գնաց իր ներքին սենյակ, ծունկի եկավ, բացեց իր Աստվածաշունչը և հետևյալ սրտաբուխ աղոթքը բարձրացրեց առ Աստված. «Ո՜վ Տեր, ես հավատացի Քո անսուտն Խոսքից ինձ տրված խոստումներիդ: Հավատացի նաև, որ ապրելու եմ, լսելու եմ ու տեսնելու եմ իմ Թոմի փրկության բարի լուրը ու նրա՝ Քո Ավետարանը մեղավորներին քարոզելը: Հիմա մի հեռագիր ինձ հայտնեց, որ նա մահացել է: Ասա՛, Տե՛ր իմ, ո՞րն է ճիշտ՝ հեռագի՞րը, թե՞ Քո Խոսքը»:

Նա վստահ համոզումով ոտքի կանգնեց և հետևյալ հեռագիրն ուղարկեց բանտի տնօրինությանը. «Անկասկած սխալմունք է եղել. իմ տղան չի մահացել»: Եվ իսկապես նրան ուղարկված հեռագրում սխալ տեղեկություն էր գրվել: Թոմ Քարթրը ողջ էր: Շատ ժամանակ չանցած՝ նա փրկություն ստացավ բանտում և երբ այնտեղից ազատ արձակվեց, հոգիների փրկության պատճառ եղող հզոր քարոզիչ դարձավ:

Օ՜հ, երանի՜ թե Տերը մեր եկեղեցիներից այսպիսի հաստատ հավատքով աղոթող մայրեր հաներ, որովհետև բազմաթիվ անառակ որդիներ ունենք, որոնք թափառում են մեղքի ճանապարհին՝ հավիտենական կորստի դատապարտված:

Քաղված է «Զմայլելի դրվագներ» գրքից